

ԱՂ. ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆԻՆ
ԵՎ Գ. ՄԻՐՋՈՅԱՆԻՆ

Ստորև տպագրության ենթ հանձնում Ալեքսանդր Մատուրյանի յոթ անտիպ նամակները, որոնք հասցեագրված են «Տարազի» և «Աղբյուրի» գլխավոր աշխատակիցներ Ստեփան Լիսիցյանին և Գաբրիել Միրզոյանին: Բոլոր նամակները գրված են 1893 թ.:

Հայտնի մանկավարժ, գրող, ազգագրագետ և թարգմանիչ Ստ. Լիսիցյանը (1865—1947) 1892—1893 թթ. եղել է «Տարազի» փաստական խմբագիրը և նշանակալի դեր է կատարել այդ հանդեսի հրատարակության գործում: Գ. Միրզոյանը (1857—1902) Ալ. Մատուրյանի վաղեմի բարեկամներից էր: Միջակայան արհեստագործական ուսումնարանում նա եղել է Մատուրյանի ուսուցիչը և խրախուսել է պատանի բանաստեղծի առաջին քայլերը:

Հրապարակվող նամակները վկայում են երիտասարդ Մատուրյանի գրական հետաքրքրությունների բազմազանության մասին:

Նամակները մեզ է տրամադրել արվեստագիտության դոկտոր Սրբուհի Լիսիցյանը, որին և հայտնում ենք խորին շնորհակալություն:

ԱԼՎԻՆԱ ԱՐԱՄՅԱՆ

1

1893 թ., 10 հունվարի, Մոսկվա

Ազնիվ բարեկամ¹,

Շնորհավոր նոր-Տարի, Ծնունդ և Մկրտություն:

Տկարությունս պատճառով մինչև այժմ չէի կարողանում նյութ ուղարկել «Աղբյուր-Տարազին»։ Հիմա մի քիչ լավ եմ զգում ինձ և կանոնավորապես կսկսեմ աշխատակցել:

Արժրունու տարածում մահր մեծ իրարանցում առաջացրեց այստեղ և խորին վշտով համակեց ամենքի սրտերը: Արդարև, կորուստը մեծ է և անփոխարինելի: Գուցե մեզանում երևան գան Արժրունու հավատարիմ աշակերտներ, Արժրունու քաջ զինակիցներ, բայց հազիվ թե նոքա ունենան Արժրունու շիտակությունը, եռանդն ու անձնուրացությունը, մանավանդ վերջին հատկությունը, որ այնպես զարմանալի կերպով մարմնացած էր նրա անձնավորության մեջ: Ասում են, հուղարկավորության հանդեսին հայկական կյանքում չտեսնված և չլսված անցքեր են տեղի ունեցել—ժողովրդական բողոք, ընդհարումներ ամբոխի և ոստիկանության մեջ, բանտարկություններ և այլն... Այստեղ հազար ու մի տեսակ թեր ու դեմ, իրար հակասող լուրեր են պատվում և զուտ եղելությունը ոչ ոքին հայտնի չէ: Խնդրեմ, ազնիվ բարեկամ, եթե կարելի է մանրամասն զրեք եղածն ու կատարվածը: Շատ շատերն անհամբերությամբ սպասում են այդ զարմանալի անցքերի պատմությունը²:

¹ Նամակը ուղղված է Ստ. Լիսիցյանին:

² Գ. Արժրունու հուղարկավորության մասին տե՛ս Լեո, Գրիգոր Արժրունի, հ. 3, Թիֆլիս, 1905, էջ 480—481:

Ուղարկում եմ նկարիչ վարդգես Սուրենյանցի հասցեն՝ Москва, Сретенский бульвар, дом Юрасова, Вардгесу Яковлевичу Суреняну. Այդ երիտասարդ նկարիչի հետ անպատճառ գրադրության մեջ մտեք. ինքը մի ազնիվ, անշահասեր տղա է և «Աղբյուր-Տարաղին» շատ պետք կգա: Քաջ ծանոթ է հայկական կյանքի և գեղարվեստի հետ: Ունի բազմաթիվ նկարներ ու էտյուդներ ընդհանրապես արևելյան և մասնավորապես հայկական կյանքից:

Մինչև օրս «Աղբյուր-Տարաղ» չեմ ստացած. «Թխտենին» և ոտանավորս³ լույս տեսան, թե ոչ:

Խնդրեմ, հարգելի բարեկամ, ոտանավորներիս տակ անփոփոխ թողնել տարեթիվը, ամսաթիվը և տեղի անունը:

Հնդունեցեք անկեղծ հարգանացս հավաստիքը:

Ձեր՝ Ա. Մատուռյան

Իմ հասցեն՝ Москва, Кузнецкий мост, Банкирский дом бр. Дзамгаровых, Александру Цатурян.

2

1893 թ., 23 փետրվարի, Մոսկվա

Մեծ <աղբ> սյ. Գաբրիել Միգոյանցին.

Ազնիվ բարեկամ,

«Աղբյուրն» ու «Տարաղը» այս տարվանից կանոնավորապես ստանում եմ. շնորհակալություն: Անցած հունվար ամսվա ընթացքում 5 հատ ոտանավոր եմ ուղարկել «Տարաղի» համար—երեքն ինքնուրույն՝ «Իմ օրագրից», «Մի հավատար» և երկուսը թարգմանական՝ Նեկրասովից: Դրանցից «Տարաղում» լույս տեսավ միայն մեկը⁴. արդյոք մյուսներն էլ լույս են տեսնելու, թե ոչ: Եթե գրաքննիչն է արգելել—ինչ կարելի է անել, իսկ եթե խմբագրությունն է անհամար դատել—դա ուրիշ խնդիր է... Այնուամենայնիվ, ինձ համար դա շատ հետաքրքիր է իմանալ: Ուղարկում եմ դարձյալ 4 հատ ոտանավոր—մեկն «Աղբյուրի», իսկ երեքը «Տարաղի» համար: «Աղբյուրում» տպված «Նոր-Տարի» ոտանավորս արդյոք խմբագրատա՞նն է անդամահատվել: Թե՞ գրաքննիչն է խուզել, որ տեսա, զարմացած մնացի: «Տարաղում» տպված ոտանավորումս⁵ մի խոշոր սխալ է ներս սպրդել. փոխանակ՝ «Ինչպես ալիքներ կա՞րծե՞ ժայռերին», տպված է «Ինչպես ալիքներ կա՞րծե՞ն ժայռերին»:

Ինչո՞ւ «Տարաղում» չեք տպում Գր. Արծրունու հուղարկավորության հանդեսի նկարները զանազան մոմենտներին. արդյոք ի՞նչ վիճակումն է «Մշակի» հրատարակության գործը: Այստեղ զանազան անախորժ և աննպաստավոր լուրեր են պտտվում:

Հնդունեցեք անկեղծ հարգանացս հավաստիքը:

Ձեր՝ Ա. Մատուռյան

³ Խոսքը, ըստ երևույթին, «Նոր տարի» բանաստեղծության մասին է, որը տպագրվել է «Աղբյուրում», 1893 թ., № 1-ում:

⁴ Նեկրասովից Մատուռյանի թարգմանությունը՝ «0», երգեր, երգեր, միակ վկաներ...» վերնագրով լույս է տեսել «Տարաղում», 1893 թ., № 7-ում, իսկ «Իմ օրագրից» ոտանավորը՝ № 8-ում:

⁵ Խոսքը Նեկրասովի «0», երգեր, երգեր, միակ վկաներ...» բանաստեղծության թարգմանության մասին է:

3

1893 թ., 16 հունիսի, Մոսկվա

Մեծարգո պարոններ

Դ. Միրզոյան և Ս. Լիսիցյան,

«Տարազի» համար ուղարկում եմ երկու ոտանավոր Մորից Հարտմանից թարգմանած—«Ոսկեզօծ լապտեր» և «Լուսնային»⁶։

Հայնեի ոտանավորներից մեկում⁷, վերջին ոտանավորում մի խոշոր սխալ է ներս սպրդել տպագրության ժամանակ. «հոգս» բառի տեղ տպված է «հոգիս», որը բոլորովին շփոթում է առաջին շարքի տողի իմաստը։ Նույնպիսի խոշոր սխալներ պատահում են և «Մուրճում» և այն էլ՝ քոռ բախտիցս՝ հենց իմ ոտանավորներում։

Խոնարհաբար խնդրում եմ իմ այն ոտանավորները՝ ինքնուրույն թե թարգմանական՝ որոնք կամ գրաքննիչից են արգելվում, կամ խմբագրությունն է այս ու այն պատճառով անհարմար դատում տպագրության համար, հետ ուղարկել ինձ։ Առաջիկա «Տարազի» համար ուղարկածներից անտիպ են մնում «Մի վհատի», «Մարգարե»—Նադսոնից, «Բաղձանք»—Պուշկինից. այդ 3-ը վաղուցվա ուղարկած են։ Նոր ուղարկածներից՝ «Երկրի մշակներ» և «Բարի հայացք», որոնք, երևի, նույնպես չեն տպվելու։ Ահա այդ 5 ոտանավորը և մի հատ էլ վաղուց «Աղբյուրին» ուղարկած «Ծաղիկներ» վերնագրով մի ոտանավորը՝ Մորից Հարտմանից թարգմանած, եթե նույնպես չէ տպվելու, խնդրում եմ ուղարկել ինձ հետ⁸։

Նկարիչ Սուրենյանցից այս օրերս բարեհամբավ նամակ կստանաք։ Նա ստացել է պ. Լիսիցյանի նամակը։ Ես նույնպես երկար ու բարակ խոսքի «Աղբյուր-Տարազին» աջակցելու մասին։ Շատ ազնիվ երիտասարդ է և չեմ կարծում, խնայե յուր ուժերը։

Ընդունեցեք անկեղծ հարգանացս հավաստիքը։

Ա. Մատուրյան

4

1893 թ., 3 օգոստոսի, Մոսկվա

Հարգելի բարեկամ,

Ձեր պատասխանն նամակն ստացա։

Արդարև, մեծ ուժ, եռանդ և տոկունություն պետք է ունենալ գլուխ անցնելու և շարունակելու մի գործ,— այն էլ պարբերական հրատարակության պես մի հասարակական փափուկ գործ, որի ղեկավարն է եղել տարիների ընթաց-

⁶ Մ. Հարտմանի «Ոսկեզօծ լապտերի» թարգմանությունը տպագրվել է «Տարազում», 1893 թ. № 26, Հետագայում Մ. Հարտմանի այդ երկու բանաստեղծությունները ղեկավարվել են Ալ. Մատուրյանի «Բանաստեղծությունների» 2-րդ հատորում, որը լույս է տեսել Մոսկվայում, 1898 թ.։

⁷ Ալ. Մատուրյանի թարգմանությամբ «Տարազի» 1893 թ. № 23-ում տպագրվել են Հայնեի երեք բանաստեղծություններ՝ «Երկրի սերը», «Դու դառնալով տանըս տիկին...» և «Օհ, թե նկարչի ձեռք ունենայի...»։ Խոսքը վերջին բանաստեղծության երկրորդ տողի վրիպակի մասին է։

⁸ Մ. Հարտմանի «Ծաղիկներ» բանաստեղծության թարգմանությունը լույս է տեսել «Աղբյուրի» 1893 թ., № 7—8-ում։

քում պ. Տիգրան Նազարյանը⁹ մի գործ, որ Տիգրանի պես մարդու ձեռքում առևտրական օյինքազության փոխվելով՝ բոլորովին այլանդակվել, կորցրել է յուր վսեմ նշանակությունն ու բարձր արժանիքը։ Այդպիսի մի գործին նորից կյանք-կենդանություն ներշնչել, նորից ազնվացնել, բարձրացնել նրան—գա իրավ որ բարոյական և նյութական զգալի զրկանքներ և զարմանալի անձնվիրություն է պահանջում։ Այգ կողմից Ձեր և պ. Ստ. Լիսիցյանի եռանդը, ձեռքը սրտիս դրած կարող եմ ասել, և՛ օրինակելի, և՛ գովելի է։ Իբրև անկեղծ և երդվյալ բարեկամ մեր մատաղ գրականության, ես շնորհակալ սրտով ամուր սեղմում եմ երկուսիդ ձեռքն էլ և կատարյալ հաշտություն մաղթելով Ձեզ՝ ամենայն սիրով հայտնում եմ իմ պատրաստականությունը այսուհետև նույնպես իմ տկար ուժերովս շարունակ աջակցելու Ձեր հանրաշահ գործին։

Շատ լավ կլինի, եթե յուրաքանչյուր քառամյակին (3 ամիսը մի անգամ) «Տարազում» տպելիք առհասարակ այն նյութերի ցուցակը, որոնք լույս չեն տեսնելու «Աղբյուր-Տարազում»։ Այդպես վարվում են ռուսաց շատ ամսաթերթեր ու շաբաթաթերթեր։ Այգ բանը միշտ կփարատեր հեռավոր աշխատակիցների տարակուսանքները։

Ինչ ուզում եք ասեք, բարեկամս, բայց ես չեմ կարող չհայտնել իմ զարմանքը, որ «Աղբյուր-Տարազի» խմբագրությունը չտպագրեց այնպիսի ոտանավորներ, որպիսիք են՝ Պուշկինի «Բաղձանքը», Նադսոնի «Մարգարեն»¹⁰, Մորից Հարումանի «Մաղիկներ» և «Լուսթյուն»... Դա, իհարկե, ճաշակի խնդիր է, որի դեմ վիճել չի կարելի։ Սակայն զարմանում եմ, որովհետև նույն «Տարազում» տպվեցին Կոստանյանի¹¹ մի քանի ինքնուրույն և թարգմանական ոտանավորները և Սրնգի¹² «Օրիորդ Պապայանին» թույլ ոտանավորները... Կրկնում եմ, դա, իհարկե ճաշակի բան է։

Վստահ կարելի է հուսալ, որ «Աղբյուր-Տարազը» ապագայում ավելի արգելադրաբար կլինեն, որովհետև այժմյանից իսկ պարզ աչքի է ընկնում այն զգալի բարեփոխությունը, որ մտել է նրանց մեջ մի որևէ 5—6 ամսվա ընթացքում։

Բարեկամական մի անկեղծ խորհուրդ. պատկերների վերա առանձին խնամք տանել։ Կամ իսկի պատկեր չտալ, կամ տալ խնամքով տպված գեղարվեստական մի գործ։

Նկարիչ Վարդգեսի նկարներն, իհարկե, ստացաք։ Ինչպե՞ս եք գտնում։ Էդ նկարներն իմ ներկայությամբ նկարելիս՝ երիտասարդ նկարիչը շարունակ կարոտով ասում էր. «Ա՛խ, Լիսիցյանի ջութակը...»։ Մի իմացեք, բարեկամս, էդ ի՞նչ ջութակ է, որի վերա նկարչի աչքն է մնացել...

Ընդունեցեք Դուք և պ. Լիսիցյանը իմ անկեղծ հարգանքները։

Ա. Մատուռյան

⁹ Տիգրան Նազարյան (1861—1921), հասարակական և մշակութային գործիչ, «Տարազի» և «Աղբյուրի» խմբագիր-հրատարակիչ։

¹⁰ Պուշկինի «Բաղձանքը» տպվել է «Մուրճի» 1893 թ. № 11-ում, իսկ Նադսոնի «Մարգարեն»՝ նույն ամսագրի 1894 թ. № 7-ում։

¹¹ Հովհաննես Կոստանյան (1869—1942) — բանաստեղծ, հանգես է եկել ժամանակի մամուլում։

¹² Սրնգ (Արշակ Մեհրաբյանի ծածկանունը) — «Աղբյուրի» և «Տարազի» աշխատակիցներից, նրա «Օրիորդ Պապայանին» բանաստեղծությունը տպվել է «Տարազի» 1893 թ. № 27-ում։

<1893, հոկտեմբեր>¹³

Մեծաբզո պարոն

Ստ. Լիսիցյան,

Ձեր պատվական նամակը և շտպված նյութերս շնորհակալությամբ ստացաւ։ Շատ և շատ ցավում եմ, որ «անգութ ոռոգանքը»¹⁴ Ձեր գլխին այդպիսի օյիններ է խաղում։ Ի՛նչ արած, բարեկամս, դիմացե՛ք։

Խնդրում եմ «Տարագ-Աղբյուրն» այսուհետև հետևյալ հասցեով ուղարկեք ինձ՝ Москва, Мясницкая, дом Ермаковых, в типографию М. Бархударян, передать Александру Цатурян. Հասցես փոխում եմ, որովհետև Ժամհարյան զղաներս հրաժարեցրին ինձ պաշտոնիցս կամ, ավելի ճիշտն ասած, դուրս արին¹⁵, Պատճառը՝ Հայրիկի օժման օրը 110 հոգու ստորագրությամբ ուղարկած հեռագիրս էր, որը ես էի գրել և մի քանի մոտ բարեկամներիս օգնությամբ ես էի աշխատել ամեն բան գրելու բերելու։ Նեղացան, որ ժողովրդի ստվար մասին, որի գլխին նստել էին և աշխատում էին այդպես էլ նստած մնալ թե՛ իրենք, և թե՛ մի քանի ուրիշ «աղաներ» ու «հայ չինովնիկներ», ես միջոց տվի նրանց աղայական հպատակությունից դուրս գալու և ինքնագլուխ յուր զգացմունքներն արտահայտելու պաշտելի Հայրիկին։ Կարծես թե Հայրիկը միմիայն «աղաների» և բարձրաստիճան հայ «չինովնիկների» Հայրիկ է։ Պաշտոնումս հավատարիմ էի, ծառայությունս անբիծ էր, բայց 110 հոգուց ջիգրը հանելու համար ինձ դուրս արին, սրտի մաղձը ինձ վերա թափեցին։ Ի՛նչ արած։ Խաների և փաշաների ժամանակներում ենք ապրում... Ուղղամտությունը, շիտակությունը գեռ հալածվում են եսից, կամայականությունից և փառամոլությունից։

Ձերմ ողջույնս պ. Գ. Միրզոյանցին։

Ընդունեցեք անկեղծ հարգանացս

հավաստիքը։

Ա. Մատուրյան

1893 թ. 31 հոկտեմբեր, Մոսկվա

Մեծաբզո պարոն

Ս. Լիսիցյան,

Ցավում եմ, որ հոգվածս սաստիկ կրճատված լույս տեսավ «Տարագում»¹⁶, Մի քանի այնպիսի կարևոր կտորներ եք հանել, որ բավականին թու-

¹³ Նամակը անթվակիր է։ Հենվելով այն փաստի վրա, որ Ժամհարյանները Մատուրյանին վտարել են 1893 թ. սեպտեմբերի 30-ին, ենթադրում ենք, որ նամակը գրված է այդ դեպքի թարմ հետքերով, հոկտեմբեր ամսի սկզբներին։

¹⁴ «Անգութ ոռոգանք» արտահայտությունը վերցված է Ռ. Պատկանյանի «Անվերջ գանգատներ» բանաստեղծությունից։ «Ռոզնեց»՝ ոռոգան «вечное» բառն է շրջափոխված։

¹⁵ Ինքնակենսագրության մեջ բանաստեղծը այդ մասին գրում է. «Ձոր տարվա չափ ծառայել եմ Մոսկվայի հայերին պատկանող մի բանկային տան մեջ, որտեղից նույնպես վճարվել եմ, բայց ոչ իբրև անպետք պաշտոնակատար, այլ իբրև մի մարդ, որի հասարակական հայացքներն ու գաղափարները տեղային զանազան հասարակական խնդիրներում մարտել չեն կարողացել մոսկվաբնակ հայ խաղերիներս» (Ե. Չարենցի անվան զրականության և արվեստի թանգարան, Մատուրյանի ֆոնդ, № 107)։ Հմմտ. «Էրաբեր», 1973, № 2, էջ 49։

¹⁶ Խոսքը Ալ. Մատուրյանի «Պատկերներ Ռուսիայի կյանքից» մինչ այժմ անհայտ հոգվածի մասին է, որը տպվել է «Տարագի» 1893 թ. № 41-ում. «Սանգրո» ստորագրությամբ։ Ինչ-

լացնում են հողվածի ընդհանուր տպավորությունը: Խոսելով Մոսկվայի հայերի անհամերաշխության և մի խումբ մարդկանց կրեոստական ճես-ի» և խայտառակ աղայություն մասին, անհրաժեշտ էր, որ այդ աղայության տգեղ արդյունքներն էլ, իբրև անհրաժեշտ և ակներև փաստեր, մնային հողվածում: Ես կարծում եմ, որ Դուք չեք տարակուսում փաստերի և առհասարակ գրած-ներինս ճշտության մասին: Այլապես Դուք երկմտելիս կլինեիք և իմ շիտակության և ուղղամտության մասին: Չեմ կարծում նույնպես, որ Դուք քաշվելիս լինեք՝ առիթ ներկայանալուց՝ այս ու այն աղային կոթելուց կամ խաթրին դիպելուց: աղաներ, որոնք իրենց խավար, անդրընդհանուր գաղափարներով մի տեսակ ցեցեր են հանդիսանում մեր հասարակական կյանքում և երբեմն հանդգնում են «մայնեթներով» կաշկանդել ազգի հառաջադիմությունը, «աբասիններով» առնել հայրենասիրության սուրբ գաղափարը:

Ուղարկում եմ 4 հատ երգ՝ Հայնեից թարգմանած¹⁷, Եթե թարգմանությունս հաջող կգտնեք, խնդրում եմ 4-ն էլ միասին տպեք:

Ջերմ ողջունս մեր Գաբրիել Միրզոյանին:

Ես դեռ առանց պաշտոնի եմ:

Մնամ Ձեզ հարգող՝

Ա. Մատուրյան:

7

1893 թ., 13 նոյեմբեր, Մոսկվա

Մեծապատիվ պարոն

Ստ. Լիսիցյանց,

Ուղարկում եմ «Տարազի» համար բանաստեղծ Պլեշչեկի մասին գրած հոգվածս¹⁸, որը եթե անհարմար լինի «Պատկերներ Ռուսիայի կյանքից» ընդհանուր վերնագրի տակ տպել, այն ժամանակ խնդրում եմ տպեք իբրև առանձին հոգված «Բանաստեղծ Ալեքսեյ Պլեշչեկ» խորագրով և տակը ստորագրեք անուն-ազգանունս—Ա. Մատուրյան: Ավելի լավ կլինի, իհարկե, եթե իբրև առանձին հոգված տպեք—կամ «Տարազի» մի Ձեռքում կամ շարունակությամբ երկու Ձեռքում: Միայն խնդրում եմ առանց կրճատումների: Հողվածը առանց այն էլ մի համառոտ և թուուցիկ նկարագիր է բանաստեղծի հետաքրքիր կյանքի և գործունեության: Ես շատ բան թողել, շատ բանի մասին ոչինչ չեմ գրել: Ուղարկում եմ նաև Պլեշչեկից թարգմանած 3 հատ բանաստեղծություն¹⁹: Ցան-

պես ակնարկում է հեղինակը, այդ հողվածով սկսվում են նրա «գրույցները» «Տարազի» ընթերցողների հետ՝ «Մոսկվայի մտավոր և հասարակական կյանքի մասին ընդհանրապես և մոսկվաբնակ փոքրաթիվ հայ գաղթականության մասին մասնավորապես»: Առաջին «նամակում», որը, ի դեպ, և վերջինը եղավ, բացահայտվել են Մոսկվայի հայ համայնքի ներքին տարաձայնություններն ու պառակտումները:

¹⁷ Հայնեից կատարված հիշյալ թարգմանությունները «Տարազում» 1893 թ. լույս չեն տեսել:

¹⁸ Հողվածը գրվել է ռուս բանաստեղծ Ա. Ն. Պլեշչեկի (1825—1893) մահվանից անմիջապես հետո, բայց «Տարազում» լույս չի տեսել: Հողվածի տեքստը մինչև այժմ անհայտ է: Ենթադրում ենք, որ այն արգելել է գրաքննությունը, որին աքսորյալ Պլեշչեկը, «Հառա՛ջ» հանրահայտ բանաստեղծության հեղինակը, անժանոթ չէր: Այդ հողվածը կարող էր հետաքրքիր էջ բացել հայ-ռուսական գրական կապերի մեջ, մանավանդ հիմք կա ենթադրելու, որ Մատուրյանը կարող էր անձամբ ծանոթ եղած լինել Պլեշչեկին, ամենայն հավանականությամբ՝ Վենետիկի ընտանիքում:

¹⁹ Պլեշչեկից կատարված թարգմանությունները չեն տպվել «Տարազում»:

կալի էր, որ այդ բանաստեղծությունները կամ հոդվածի հետ միևնույն Պ-ում լույս տեսնեն, կամ անմիջապես հետո—հետևյալ Պ-ում: Այսօր ստացա «Աղբյուրի» հոկտեմբերի Պ-ը և ոտանավորս չճանաչեցի²⁰... Սրտանց ցավում եմ... Այդ մասին վաղը նամակ կգրեմ պ. Գ. Միրզոյանին: Պարոն Տ. Հովհաննիսյանից²¹ ստացա պրեմիաները²², նվերները բաժանեցի ըստ պատկանելոյն, իսկ մնացյալները կամաց-կամաց ծախում եմ: Դժվարությամբ է ծախվում, որովհետև Հայրիկի պատկերն ամենքն էլ առած ունեն:

Մնամ Ձեզ հարգող՝ Ա. Ծառուրյան

ПИСЬМА Ал. ЦАТУРЯНА К Ст. ЛИСИЦЯНУ И Г. МИРЗОЯНУ

АЛЬВИНА АРАМЯН

Резюме

Публикуемые впервые письма Ал. Цатуряна адресованы ведущим сотрудникам еженедельника «Тараз» и детского журнала «Ахпюр» — Ст. Лисицяну и Г. Мирзоюну. Письма относятся к 1893 г. и содержат новые, до сих пор не известные исследователям факты творческой биографии поэта. Опираясь на сообщаемые в них сведения, удалось обнаружить статью «Картины из жизни Россин», опубликованную за подписью «Сандро» в «Таразе». Эта статья Ал. Цатуряна — первая (и, к сожалению, последняя) в предполагаемом цикле о культурной жизни Москвы — была посвящена московской армянской колонии и направлена против царящего в пей произвола армянских богачей.

Для изучения армяно-русских литературных связей несомненный интерес представляет сообщение Цатуряна о написанной им для «Тараза» статье, посвященной А. Н. Плещееву. Текст статьи пока не удалось обнаружить.

Письма Ал. Цатуряна позволяют уточнить некоторые биографические факты, в определенной степени восполняют наши сведения о литературно-общественной деятельности поэта.

²⁰ Խոսքը «Գիր» բանաստեղծության մասին է, որը տպվել էր մեծ կրճատումներով:

²¹ Տիգրան Հովհաննիսյան (1865—1921) — իրավաբան, թարգմանիչ, մշակութային գործիչ:

²² «Տարազի» խմբագրությունը, որպես նվեր, հանդեսի տարեկան բաժանորդներին ուղարկում էր հայտնի գործիչների դիմանկարները: